

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Տիգրան Սամվելի Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Գլոբալ անվտանգային ճարտարապետության կերպափոխումը, Արևմուտք-ՌԴ աշխարհաքաղաքական հակամարտությունը, Մերձավոր Արեւքում ծավալվող իրադարձությունները, տրանսպորտային-հաղորդակցային ցանցի վերաձևավորումը էական ազդեցություն են թողնում Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա՝ տարածաշրջանը վերածելով գլոբալ և տարածաշրջանային մրցակցության առանցքային ճակատներից մեկի:

ՀՀ պաշտպանական-անվտանգային քաղաքականության մշակման համատեքստում հարկ է հաշվի առնել, որ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում էականորեն մեծանում են Հարավային Կովկասի՝ տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների միջև ռազմաքաղաքական մրցակցության նոր «օբյեկտ» դառնալու անվտանգային ռիսկերը:

Տիգրան Հարությունյանի ատենախոսությունը Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունները, պետության առջև ծառայած անվտանգության համակարգի երաշխավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև պաշտպանության բնագավառի շարունակական արդիականացմանը և մեր զինված ուժերի այլ, ամենաարդիական խնդիրներին անդրադառնալու, վերջիններս համապարփակ կերպով ներկայացնելու և գիտականորեն վերլուծելու փորձ է: Պետք է ասեմ, որ այս փորձը կարելի է աներկբա հաջողված համարել: «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը մասնագիտական և գիտագործնական լայն գետնապատկեր ներկայացնող գիտական հետազոտություն է,

որը կարող է որոշակի ուղեցույց դառնալ միանգամից տարբեր ուղղությունների մասնագետների համար, իսկ եզրակացություններն ու արդյունքները կարող են անմիջապես կիրառվել գործնական առումով: Կարծում եմ արդեն իսկ կիրառվում են:

Ատենախոսության մեջ համակողմանի ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել հեղինակի կողմից առաջ բերված բոլոր արդիական գիտական խնդիրները, մասնավորապես. ուսումնասիրվել են պաշտպանության բնագավառի ինստիտուցիոնալ կայացման գործընթացի հիմքերը, վերլուծվել են բնագավառում իրականացված և ընթացիկ բարեփոխումները, գնահատվել հիմնական ձեռքբերումները, մատնանշվել դեռևս առկա խնդիրները, բացահայտվել բարեփոխումների ազդեցությունը Հայաստանի անվտանգության երաշխավորման գործում, գնահատվել պաշտպանության հայեցակարգային ուղենիշները: Այս ամենի հիման վրա ատենախոսը ներկայացրել է պաշտպանության բնագավառի շարունակական բարեփոխման կարևորությունը ազգային անվտանգության համատեքստում, գիտահետազոտական հիմքով գնահատել է պաշտպանական բարեփոխումների հայեցակարգային ձեռքբերումները, առանձնացրել և նախանշել դրանց զարգացման հնարավորությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, յոթ ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել է հիմնահարցի գիտական մշակվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները և աշխատանքի տեսական ու կիրառական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ «Պաշտպանության բնագավառի բարեփոխումները հետխորհրդային պետությունների պետական կառավարման բարեփոխումների համատեքստում» վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ «Պետական կառավարման կերպափոխումը հետխորհրդային ժամանակաշրջանում» անվանմամբ ենթագլխում համառոտ բնութագրվում են հետխորհրդային շրջանի պետական կառավարման համակարգի կայացման փուլերը, նախագահական և կիսանախագահական կառավարման ձևերին անցումային շրջանի մարտահրավերները, վերլուծվում հետխորհրդային տարածքում կառավարման

համակարգի ընտրության, նշված ինստիտուտների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվող տեսակետները, ինչպես նաև գույզահեղձ տարվում ՀՀ պետական կառավարման համակարգի ընտրության և կայացման գործընթացի հետ:

Ատենախոսը փաստում է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո առանձին երկրներ փորձել են վերափոխել պետական կառավարման համակարգը, ինչը պայմանավորված էր ինչպես նախկին ինստիտուտների անարդյունավետությամբ, այնպես էլ քաղաքական գործընթացներով: Այս համատեքստում, ինչպես նշում է ատենախոսը, «Հետխորհրդային անցման շրջանում նախագահական կառավարման ձևին նախապատվություն տալիս էին այնպիսի հին վարչակարգերը, որոնք Միության փլուզման ընթացքում պահպանել են իրենց հասանելիությունը պետական իշխանության ռեսուրսներին: Նրանց նպատակը ոչ միայն իշխանության նկատմամբ մենաստիրության պահպանումն էր, այլև դրա՝ ուրիշներին փոխանցելու հնարավորության բացառումը»:

Երկրորդ՝ «Պաշտպանության բնագավառի դերն ու նշանակությունը հետխորհրդային պետությունների պետական կառավարման մեջ» ենթագլխում քննարկվում են հետխորհրդային պետությունների, մասնավորապես՝ Վրաստանի և Ուկրաինայի պաշտպանության ոլորտներում իրականացված բարեփոխումները, հետագա գործընթացները, զարգացումներն ու հիմնական արդյունքները և համեմատականներ անցկացվում ՀՀ-ում իրականացված նմանատիպ գործընթացի հետ:

Այստեղ Տիգրան Հարությունյանը նշում է, որ ԽՍՀՄ տարիներին անդամ պետությունները կազմավորված, պատրաստված և սպառազինված էին խորհրդային մոդելով: Անդամ պետությունների բանակները նախատեսված չէին իրենց ռազմական անվտանգությունն ապահովելու համար, այլ սերտաճած էին խորհրդային կառավարման համակարգի հետ՝ որպես ենթակա բաղադրիչ, որի հիմնական խնդիրն էր սահմանափակ դեր խաղալ նախանշված աշխարհագրական տարածքում Խորհրդային Միության Գլխավոր շտաբի պլանի շրջանակներում:

Երրորդ ենթագլուխը՝ «Պաշտպանության բնագավառի բարեփոխումների էության վրա ազդող հիմնական գործոնները» վերնագրով ենթագլխում, ներկայացվում են բնագավառի բարեփոխումների արդյունավետության վրա ազդող հիմնական

գործոնները, տարատեսակ մոդելների և մոտեցումների կիրառման համատեքստում: Այստեղ ատենախոսը իրավացիորեն նշում է, որ զինվորական հաստատությունները շատ բարդ են գնում բարեփոխումների և դա պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնցից հիմնականն են բյուրոկրատական, ինչպես նաև հրամանատրման աստիճանակարգային համակարգերը, ինչը դանդաղեցնում է ցանկացած նորարար գաղափարի արագ կյանքի կոչումը: Այս համատեքստում վերլուծելով ինստիտուցիոնալ, այդ թվում, պաշտպանության բնագավառում վերափոխումների վրա ազդող գործոնները, Տիգրան Հարությունյանը նշում է, որ պաշտպանության բնագավառի փոփոխություններում Հայաստանը հետխորհրդային այլ պետություններից տարբերվում է նրանով, որ վերջինս պատմականորեն վերապրել է ազգային անվտանգության տեսանկյունից տարբերվող ճանապարհ, ունեցել մշտական սպառնալիքներ, որոնք այլ գործոնների հետ համակցված կանխորոշել են ՀՀ բանակաշինության առանձնահատուկ ուղին:

Երկրորդ գլխում՝ «Ոլորտային բարեփոխումները ՀՀ պաշտպանության և անվտանգության բնագավառում» վերտառությամբ, քննարկվում և վերլուծվում է ՀՀ պաշտպանության և անվտանգության բնագավառներում իրականացված բարեփոխումների նպատակը, էությունը, հիմնական նվաճումները և բացթողումները: Այստեղ ատենախոսն առաջ է բերում իր հետազոտության հիմնական գաղափարներից մեկը. ՀՀ պաշտպանության բնագավառի կազմակերպման և կառավարման անկատար հայեցակարգի կողմնակի ազդեցություններից էր նաև ոչ պատերազմ ոչ խաղաղություն իրավիճակային խաչմերուկում հրամանատարական շղթայի լրոզվածությունը: Ըստ ատենախոսի, այս ոլորտում հիմնական խնդիրը ծագեց Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում և դրանից հետո, երբ հայկական կողմը լուրջ խնդիրներ ունեցավ անձնակազմի գորահավաքի, անվտանգության խորհրդի գործունեության, ՀՀ ՁՈԻ, պաշտպանության բանակի և Արցախի Հանրապետության նախագահի միջև փոխգործակցության հետ կապված: Վերլուծելով վերոնշյալ իրավիճակը, ատենախոսը փաստում է, որ ՀՀ Սահմանադրությունը բացառեց պաշտպանության նախարարի մասնակցությունը ռազմական գործողությունների պլանավորումանն ու իրականացմանը:

Առաջին՝ «Պաշտպանության բնագավառի ոլորտային բարեփոխումները համապետական պաշտպանունակության ապահովման գործում» ենթագլխում,

քննարկվում են ՀՀ զինված ուժերի ինստիտուցիոնալ կայացման գործընթացը, զարգացման հիմնական փուլերը և ոլորտային բարեփոխումները: Այստեղ Տիգրան Հարությունյանը վերլուծելով զինված ուժերի կառուցման համաշխարհային փորձը փաստում է, որ զինված ուժերի կայացման գործընթացն ըստ էության մեկնարկելով զրոյից, Հայաստանը մեծամասամբ առաջնորդվեց պաշտպանության բնագավառում կիրառվող Խորհրդային լուծումներով, պայմանավորված՝ ՀՀ ԶՈՒ ինչպես բարձրագույն, այնպես էլ միջին հրամանատարական օղակների ղեկավար պաշտոններ զբաղեցնող սպայակազմի՝ ԽՍՀՄ ռազմական ուսումնական հաստատություններում և զինված ուժերում կրթության և աշխատանքային փորձի հետ: Ատենախոսը նշում է, որ հաշվի առնելով նշված ժամանակաշրջանում ստեղծված իրավիճակը և զինված ուժերի ստեղծման մեկնարկային հնարավորությունները՝ տվյալ մոդելի ընտրությունը կարելի է համարել ամենաօպտիմալը, որն ապահովեց ՀՀ ԶՈՒ հետագա զարգացման հիմքերը:

Երկրորդ՝ «ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների նպատակաուղղվածության, արդյունավետության և շարունակականության ապահովման հիմնական հայեցակետերը» վերնագրով ենթագլխում ներկայացվում են պաշտպանության բնագավառի բարեփոխումների շրջանակներում հայեցակարգային մոտեցումների կիրառումը, պաշտպանական ծախսերի, ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, պաշտպանական քաղաքականության և պլանավորման մշակույթի ներդրման գործընթացները:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Պետության շուրջ ձեւավորված անվտանգային միջավայրի և դրա փոփոխման դինամիկայի պայմաններում ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների իրականացման հիմնական ուղղությունները» վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ «ՀՀ շուրջ ձևավորված անվտանգային միջավայրի և արտաքին անվտանգային հիմնական սպառնալիքների գնահատումը» վերնագրով ենթագլխում վերլուծվում և գնահատվում է անվտանգային միջավայրը, քաղված դասերի համատեքստում առաջարկվում են ՀՀ ԶՈւ արդիականացման հիմնական ուղղությունները և մոտեցումները: Ատենախոսի կողմից հիմնավորվելում է այն դրույթը, համաձայն որի՝ Հայաստանի անվտանգային միջավայրի փոփոխման և մարտահրավերների պայմաններում պետության կողմից պահանջում են ռազմական

քաղաքականության նոր սկզբունքների ու մեթոդների որդեգրում և հետևողական կիրառում ու կատարելագործում:

Երկրորդ ենթագլխում՝ «Պաշտպանության բնագավառում շարունակական բարեփոխումների նշանակությունը համակարգի արդիականացման գործում» վերնագրով ենթագլխում ներկայացվում է պաշտպանության բնագավառում ոլորտային բարեփոխումների շարունակականության ապահովման անհրաժեշտությունը և ոլորտային զարգացման հիմնական միտումները: Հարությունյանը առաջարկություններ է ներկայացնում նաև զինված ուժերի հայեցակարգերի և կարողությունների վերափոխման վերաբերյալ: Ատենախոսը փաստում է, որ վերջիններս միջազգային ու տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների և Հայաստանի անվտանգության միջավայրի վրա դրանց ազդեցությունը գնահատելու, ինչպես նաև դիտարկվող սպառնալիքներն ու մարտահրավերները ըմբռնելու, դիմագրավման մտահղացում մշակելու և գործի դնելու տեսնկյունից ունեն կարևորագույն դերակատարություն:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության առարկայի ուսումնասիրության արդյունքում կատարված հիմնական եզրահանգումները: Սեդմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և հանդիսանում է նրա հիմնական դրույթների նույնական արտացոլումը: Իսկ ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսությունն աչքի է ընկնում հետազոտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և տրամաբանական հաջորդականությամբ: Այն շարադրված է զրազետ, գիտավերլուծական բովանդակությամբ և հեղինակային ինքնուրույն հետազոտություն է: Ամփոփելով ասելիքիս այս հատվածը կուզենայի ընդգծել, որ ատենախոս Հարությունյանի աշխատանքը աչքի է ընկնում հայցվող գիտական աստիճանի համար ընդհանրացումների բավարար որակով ու քանակով:

Հարկ եմ համարում հատուկ ընդգծել ատենախոսի ազնիվ մոտեցումները բարդ ու նուրբ խնդիրներին, աշխատանքի մեջ քննադատական տարրի առկայությունը: Գովելի է, որ ատենախոսը աշխատանքում հետևողականորեն մատնանշելով ոլորտի կոնկրետ խնդիրները խոսում է նաև դրանց լուծումների վերաբերյալ:

Դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, այնումենայնիվ, հարկ էմ համարում կատարել նաև հետևյալ դիտողություններն ու նկատառումները.

1. *Աշխատանքում որոշակի չափով առկա է շարադրանքի հրապարակախոսական ոճ, ինչը նվազեցնում է նյութի գիտականության մակարդակը: Բերեմ ընդամենը մեկ օրինակ. «Զինված ուժերն արհեստավարժ դարձնելու անհրաժեշտությունը ստիպում է ուշադրություն դարձնել հատկապես ռազմակրթական բաղադրիչի վրա: Զինված ուժերն արհեստավարժ կադրերով համալրումը, կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը պահանջում են ինքնաբավ ռազմակրթական համակարգի ձևավորում: Շատ դեպքերում պաշտպանության բնագավառում արդյունավետ բարեփոխումների հիմքում ընկած է հենց արդյունավետ ռազմական կրթությունը: Բացի վերոնշյալ ընդունելի գործոններից, որոնք նպաստում են պաշտպանական համակարգի բարեփոխմանը, դոկտրինը ևս այն առանցքային բաղադրիչներից է, որ հանդիսանում է զինվորական հաստատությունների ձևափոխմանը: Արդյունավետ դոկտրինը՝ հիմնված բարեփոխումների երկարաժամկետ տեսլականի վրա, ու դրանից բխող իրատեսական գործողությունների ծրագիրը կարող են էական ազդեցություն ունենալ պաշտպանության բնագավառի բարեփոխումների համար»: Այս ոճը և նման պնդումները առավել հարիր են հրապարակախոսական, արարողակարգային ելույթներին /ատենախոսություն, էջ 33-34/*

2. *Որոշ դեպքերում, ատենախոսը, ներկայացնելով խնդրին առնչվող առանձին հարցերի համատեքստը, իրավիճակի նկարագրության համար օգտագործում է ոչ չափելի եզրույթներ՝ առանց որևէ փաստարկի կամ կոնկրետ տվյալների: Օրինակ. «Պաշտպանական բարեփոխումների իրականացման գործընթացում միջազգային ռազմական համագործակցության համակողմանի ինտեգրմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը ձգտում էր ապահովել ինչպես միջազգային փորձի փոխառում, այնպես էլ ՀՀ ԶՈՒ, մասնավորապես՝ խաղաղապահ ստորաբաժանումների փոխգործելիության կատարելագործում /օրինակ/, այս առումով, բնականաբար հաշվի առնելով միջազգային խաղաղապահ գործողություններում հիմնականում արևմտյան երկրների ներգրավվածությունը, ՀՀ ԶՈՒ համար առավել հետաքրքրական էին արևմտյան մոդելը և փորձը /օրինակ/, հենց այս չափորոշիչներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունը կազմավորեց*

Խաղաղապահ բրիգադ, իսկ մյուս ուղորտներում ստեղծվեցին միայն փոխգործելիության հնարավորություններ՝ առանց տվյալ ստանդարտներին լիովին անցնելու» /ատենախոսություն, էջ 58-59/:

3. *Ատենախոսության մեջ հստակ ձևակերպված եզրակցությունների, տեսլականների ու առաջարկների հետ մեկտեղ առաջ են բերված նաև առանձին դրույթներ, որոնց բնույթը մինչև վերջ պարզաբանվում: Մասնավորապես, անդրադառնալով հրամանատրում առաջադրանքի միջոցով (ՀԱՄ) սկզբունքին ատենախոսը ընդամենը թվարկում է հնարավոր այն գործողությունները, որոնք «պետք է» իրականացնել՝ խնդիրը լուծելու համար «ՀԱՄ-ն առաջին հերթին մշակույթ է և ՀՀ ԶՈւ ներդնելու համար իրականացվող բարեփոխումների շրջանակներում պահանջում է համակարգային, արմատական փոփոխություններ: Հայեցակարգի ընդունման համար անհրաժեշտ է համապատասխան կրթական համակարգի ձևավորում՝ հիմնված անձի առաքինության, սեփական մտածողություն և դատողականություն սերմանելու սկզբունքների վրա: Անհրաժեշտ է ձևավորել հայեցակարգի կիրառման սկզբունքներ՝ հիմնված ազգային առանձնահատկությունների և մշակույթի վրա: Անհրաժեշտ է ճիշտ հարաբերակցության սահմանում ռիսկի և վստահության միջև: Բոլոր զինծառայողները պետք է կարողանան ստանձնել պատասխանատվություն իրենցից երկու օղակ ներքև և երկու օղակ վերև՝ ռազմական ուսումնական հաստատություններում ստանալով վերոնշյալ մակարդակի համապատասխան գիտելիքներ», - և այլն: Ի՞նչ է այս ամենը՝ միջազգային փորձից վերցված գործողությունների ծրագիր, հաստատված տեղական ծրագիր, թե՞ ատենախոսի ամփոփ առաջարկներն են՝ մնում է անհասկանալի /ատենախոսություն, էջ 109/:*

Այս ամենի հետ մեկտեղ, հարկ էմ համարում նշել, որ ներկայացված դիտողությունները չեն ստվերում ատենախոս Հարությունյանի կատարած աշխատանքը: Պետք է ևս մեկ անգամ փաստեմ, որ Տիգրան Հարությունյանն իր առջև դրված գիտական խնդիրներն ու նպատակները մեծապես կատարել է:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով հեղինակի գիտական պատրաստվածությունը, ատենախոսության վերջնաբոլոր եզրահանգումները և առաջարկությունները, գտնում եմ, որ Տիգրան Սամվելի Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման

հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում» թեմայով ատենախոսությունը լիովին բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս

ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, քաղաքական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ա.Փ.ԵՆԳՈՅԱՆ

Քաղաքական գիտ. դոկտոր Ա. Փ. Ենգոյանի ստորագրությունը հաստատում եմ
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտ. թեկնածու

Մ.Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



27 11 2023 թ.